Ուկրաինական ճգնաժամի շուրջ ԱՄՆ-ՌԴ բանակցային գործընթացը 2025 թ.-ին

Քեռյան Գարիկ Մ.
քաղաքական գիտությունների դոկտոր, Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0000-0002-7538-3857
g.keryan@ysu.am

ՀՏԴ՝ 327.8; **EDN:** BMFBYQ
DOI: 10.58587/18292437-2026.5-28
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Ուկրաինական հակամարտություն, Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Պուտին, Թրամփ, Զելենսկի, Ստամբուլի հանդիպումը, տարածքների հարցը, Ալյասկայի հանդիպումը, 28 կետերը

Процесс переговоров между США и Россией по украинскому кризису в 2025 году

Керян Гарик М.
доктор политических наук, профессор кафедры политологии,
Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. Переговоры по Украине и условиям прекращения военного конфликта символически стали одной из главных тем современной международной повестки дня. На протяжении всей президентской избирательной кампании 2024 года в США основным тезисом лидера Республиканской партии Дональда Трампа было обещание положить конец войне на Украине. Это сыграло важную роль на пути к победе.
Инициирование и управление переговорным процессом полностью перешло в монополию нового президента США Трампа. С начала 2025 года в процессе урегулирования конфликта, вместо европейских лидеров, на переднем плане оказался Дональд Трамп, настойчиво заявляющий о своем желании положить конец войне, приглашая за стол переговоров Владимира Путина и Владимира Зеленского. В этой связи изучение российско-американских переговоров по урегулированию конфликта в 2025 году имеет актуальное значение. Особенно важно это для прогнозирования развития событий и возможных сценариев в 2026 году.
Ключевые слова и словосочетания: Украинский конфликт, Российская Федерация, США, Путин, Трамп, Зеленский, встреча в Стамбуле, территориальный вопрос, встреча на Аляске, 28 пунктов

The process of negotiations between the United States and Russia on the Ukrainian crisis in 2025

Keryan Garik M.
Doctor of Political Science, professor of the Department of Political Science,
Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. Negotiations on Ukraine and the terms for ending the military conflict have symbolically become one of the main topics on the current international agenda. Throughout the 2024 US presidential election campaign, Republican Party leader Donald Trump's main message was his promise to end the war in Ukraine. This played a significant role in his victory.
The initiation and management of the negotiation process has become the sole responsibility of the new US President, Trump. Since the beginning of 2025, Donald Trump has taken the lead in the conflict resolution process, replacing European leaders, persistently declaring his desire to end the war and inviting Vladimir Putin and Volodymyr Zelenskyy to the negotiating table. Therefore, studying Russian-American negotiations on conflict resolution in 2025 is of vital importance. This is especially important for predicting developments and possible scenarios in 2026.
Keywords and phrases: Ukrainian conflict, Russian Federation, USA, Putin, Trump, Zelensky, Istanbul meeting, territorial issue, Alaska meeting, 28 points

Նախաբան

Իշխանության գալուց հետո, 2000-ական թթ. սկզբից, ՌԴ նախագահ Պուտինի և նրա քաղաքական թիմի գերնպատակը ռուսական ազդեցության վերականգնումն էր ողջ հետխորհրդային տարածքում: Այդ ճանապարհին Կրեմլի համար վճռորոշ նշանակություն ունի գունավոր հեղափոխությունների արդյունքում հաստատված արևմտամետ վարչակարգի տապալումը Ուկրաինայում, որտեղ երկու անգամ, արմատական արևմտամետ քաղաքական ուժերը հաղթել էին՝ 2003 թ. Նարնջագույն հեղափոխության և 2014 թ. Երկրորդ Մայդանի արդյունքում: Բաց առճակատումը սկսվեց 2014 թ.-ից, երբ ուժային մեթոդներով Ուկրաինայից անջատվեց Ղրիմի թերակղզին, իսկ այնուհետև

Դոնեցկի և Լուգանսկի ինքնահռչակ հանրապետությունները: Այնուհետև, ուկրաինական ճգնաժամը մի քանի տարի շարունակ դանդաղ, բայց հաստատուն քայլերով գնում էր դեպի ռուս-ուկրաինական մեծ պատերազմ:

Նախապատերազմյան տարում վճռական էր 2021թ. դեկտեմբերը, երբ սկսվեց զորքերի կուտակումը Ուկրաինայի հետ սահմանին: 2021 թվականի դեկտեմբերի 17-ին [**1**] Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հրապարակեց ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ փոխադարձ անվտանգության երաշխիքների վերաբերյալ համաձայնագրի նախագծը: Ռուսաստանը, ի թիվս այլ բաների, պահանջեց դադարեցնել ՆԱՏՕ-ի ընդլայնումը, մասնավորապես՝ չընդունել Ուկրաինային դաշինքի կազմում, չտեղակայել ՆԱՏՕ-ի լրացուցիչ զորքեր և հեռահար նշանակության զինատեսակներ, Արևելյան Եվրոպայի այն երկրներում, որոնք միացել են դաշինքին ԽՍՀՄ փլուզումից հետո: Պահանջվում էր նաև չշարունակել ԱՄՆ ռազմական համագործակցությունը հետխորհրդային երկրների հետ և չտեղակայել ԱՄՆ ռազմական բազաներ նրանց տարածքում: ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն հայտարարեցին, որ Ռուսաստանի առաջարկները, ըստ էության, վերջնագիր են, անընդունելի՝ թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ: Դրանք որակվում էին որպես միջազգային համաձայնագրերի ազատությանը հակասող և այլ երկրների, այդ թվում՝ Ուկրաինայի ինքնիշխանության սահմանափակում:

Համաձայնագրի մերժումից հետո, Ռուսաստանը 2022 թ. փետրվարի 24-ին ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ, բայց չկարողացավ իրականացնել սպասվելիք կայծակնային պատերազմը և ընկավ Արևմուտքի լայնածավալ պատժամիջոցների տակ: Այս փուլում էր պատերազմի կանխման առաջին քայլը՝ 2022 թ. մարտ-ապրիլ ամիսների բանակցությունները ***Ստամբուլում:*** Բանակցությունների հենց սկզբում Ռուսաստանը դուրս բերեց իր զորքերը Կիևի մոտակայքից և Չեռնիգովից՝ որպես «բարի կամքի ժեստ»: Սակայն Ուկրաինայի եվրոպական դաշնակիցների, հիմնականում Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնի դիրքորոշման պատճառով, համաձայնագիրը չստորագրվեց:

Թրամփի դիրքորոշումները. ՌԴ-ԱՄՆ բանակցային գործընթացի սկիզբը:

2023-24 թթ. կարելի է համարել ուկրաինական ճգնաժամի երկամյա պատերազմական առաջին փուլը: Այս ընթացքում նախագահ Բայդենի ադմինիստրացիան և ԵՄ առաջատար պետությունների ղեկավարները միասնական էին պատերազմով և պատժամիջոցներով Ռուսաստանի ռեսուրսները հյուծելու և պարտության մատնելու ռազմավարությամբ: Դիվանագիտական-բանակցային ճակատում լճացման ժամանակաշրջան էր: Սակայն իրավիճակը փոխվեց 2025 թ. հունվարին, երբ իշխանության եկավ Դոնալդ Թրամփը: Ինչպես նշեցինք, պատերազմի անհապաղ դադարեցման և միլիարդների հասնող ռազմական ծախսերի քննադատության հռետորաբանությունը պայմանավորեց ԱՄՆ 2024 թ. նոյեմբերյան ընտրություններում Հանրապետական կուսակցության առաջնորդի հաղթանակը: Լրիվ սպասելի էր, որ Սպիտակ Տան նոր ղեկավարը սկսելու էր բանակցային գործընթացը [**2**]: Գործընթացի սկիզբը ***հեռախոսազանգն էր***:

Վլադիմիր Պուտինի և Դոնալդ Թրամփի միջև հեռախոսազրույցը տեղի է ունեցել Ամերիկայի նոր նախագահի 2025 թ. հունվարի 20-ի երդմնակալությունից երեք շաբաթ անց՝ փետրվարին: Արևմուտքում դիվանագիտական մեկուսացման պայմաններում այս զանգը շրջադարձային հաջողություն էր Ռուսաստանի առաջնորդի համար: Ըստ էության, Մոսկվայի և Վաշինգտոնի միջև Ուկրաինայի ճակատագրի վերաբերյալ երկար սպասված բանակցությունները մեկնարկեցին այն ձևաչափով, որը Պուտինը համարում է առավել հարմարավետ: Վերլուծաբան Ալեքսանդր Բաունովը նշում է, որ նման համատեղ հաղթանակը կբերի Մոսկվային և Վաշինգտոնին մերձեցման, հաղթահարելով քաղաքական և գաղափարախոսական արգելքները, ինչպես Ստալինը և Ռուզվելտը մերձենալով երկրորդ աշխարհամարտի ընթացքում, ի վերջո բաժանեցին աշխարհը Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներում: Յալթա-պոտսդամյան երկբևեռ աշխարհակարգի հետ համեմատությունները միշտ էլ համապատասխանել են Պուտին ձգտումներին, դրա վերականգնումը Կրեմլում դիտարկում են որպես բարձրագույն նվաճում, որը կարող նաև խորհրդանշականորեն չեղարկել է Մոսկվայի համար Սառը պատերազմի պարտության տհաճ հետևանքները [**3**]: Ակնհայտ է, որ Պուտինը ուկրաինական հակամարտության կարգավորումը ի սկզբանե մատուցում է որպես նոր աշխարհակարգի հաստատման իրողություն: Սա երևաց Վաշինգտոնի և Մոսկվայի միջև ուղիղ զրույցի մեկնարկով, որովհետ տեղի ունեցած հեռախոսազրույցի մասին Թրամփի և Կրեմլի հաղորդագրություններում Եվրոպան ներկայացվում էր չնչին հիշատակմամբ:

Հեռախոսազրույցին հաջորդեց 2025 թվականի փետրվարի 18-ին Ռուսաստանի և ԱՄՆ պատվիրակությունների հանդիպումը Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր Ռիադում: Բանակցությունների ընթացքում անդրադարձ եղավ նաև երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների և շփումների վերականգնմանը [**4**]: 2025 թ. մարտին կրկին Էր Ռիադում

ռուս-ամերիկյան բանակցություններ էին ընթանում: Մինչ այդ Թրամփը Սպիտակ Տանը ընդունելության ժամանակ բախվել էր Զելենսկու հետ [**5**]: Դա բացառիկ իրադարձություն էր ամերիկյան նորագույն պատմության մեջ, օտարերկրյա պետության ղեկավարը հյուրընկալվելով ԱՄՆ նախագահի մոտ ստիպված էր հակադարձել իրեն ուղղված կոշտ, երբեմն նույնիսկ վիրավորական արտահայտություններին: Զելենսկին գիտակցելով իրավիճակի բարդությունը, այս հանդիպումից կարճ ժամանակ անց ստիպված նահանջեց և հետո համաձայնագիր [**6**] կնքեց ԱՄՆ-ի համար արտոնյալ պայմաններով Ուկրաինայի հանքային պաշարները շահագործելու վերաբերյալ:

Բանակցային գործընթացում քննարկվող հաջորդ հանգուցային հարցը՝ **«ՆԱՏՕ-ի ընդլայնման հետևանքով առաջացած պատերազմ»** դրույթի քննարկումն էր: Դաշինքի ընդլայնման և պատերազմի միջև պատճառահետևանքային կապը ամենից համոզիչն է թվում արևմտյան հասարակական կարծիքի համար: Այստեղից էլ Թրամփի ըմբռնումը խաղաղության ուղու վերաբերյալ, ըստ որի Բայդենը սկսեց Ուկրաինայի՝ ՆԱՏՕ-ին միանալու գործընթացը, ինչը հրահրեց ռուսական հարձակումը: Հետևաբար՝ ՆԱՏՕ-ի դռները պետք է պաշտոնապես փակվեն Ուկրաինայի համար և պատերազմի պատճառները կվերացվեն: Միաժամանակ պաշտոնավարման 100 օրվա ընթացքում Թրամփի վարչակազմը հասկացավ, որ հատուկ ռազմական գործողությունը դադարեցնելու համար Ռուսաստանը անդրադառնում է «հակամարտության արմատական պատճառների» շատ ավելի լայն շրջանակի, նույնիսկ վերանայելով Սառը պատերազմում Արևմուտքի տարած հաղթանակի որոշ արդյունքներ: Թրամփն արդեն իսկ արտահայտել է իր պատրաստակամությունը՝ պաշտոնապես ճանաչել Ղրիմը և այլ տարածքներ որպես ռուսական, սկսել պատժամիջոցների վերացման գործընթացը, կարգավորել առևտրային և դիվանագիտական հարաբերությունները և վերականգնել Մոսկվայի մասնակցությունը գլոբալ խնդիրների լուծմանը: Այլ կերպ ասած գնալ «Նոր Յալթայի”””»:

Հրադադարի հարցը և ռուս-ուկրաինական հանդիպումը Ստամբուլում

Խաղաղության ճանապարհին գլխավոր խնդիրը Ռուսաստանի և Ուկրաինայի դիրքորոշումների անհամատեղելիությունն է: ԱՄՆ նախագահի դեսպան Սթիվեն Ուիտկոֆֆը երեք ամիս անցկացրեց՝ փորձելով ձևակերպել Մոսկվային և Կիևին ուղղված ամերիկյան վերջնական առաջարկը: Սակայն, ինչպես պարզ դարձավ ապրիլի 17-ին Փարիզում [**7**] կայացած հանդիպումից հետո, այն մերժվեց Կիևի և նրա եվրոպացի դաշնակիցների կողմից: Հետագա հակաառաջարկները կողմերին չմոտեցրին փոխզիջման և ապրիլի վերջին Վաշինգտոնի խաղաղության ջանքերը փակուղի մտան:

Մայիս-հունիս ամիսներին ռուսական դիվանագիտությունը ամեն կերպ փորձում էր ուղիներ գտնել դիվանագիտական նվաճումները պահպանելու համար, կամ ուժով, կամ արտաքին լեգիտիմացման միջոցով: Այս ժամանակ առաջնային քննարկվում էր ***հրադադարի*** հարցը: Զելենսկին բանակցությունների նախապայման էր համարում ռազմական գործողությունների դադարեցումը: Պուտինը մշտապես համոզված է, որ հրադադրը օգտագործվելու է ուժերի վերադասավորման և նոր հակահարձակման համար: Մինչ նախագահ Թրամփը հավանություն տվեց 30-օրյա հրադադարին [**8**], Պուտինը հանդես եկավ բոլորովին այլ գաղափարով: Նա հակառակ մոտեցումն ընդունեց և առաջարկեց բանակցություններ սկսել առանց հրադադարի՝ կամ էլ վերսկսել 2022 թ. գարնանը Ստամբուլում ընդհատված բանակցությունները, որոնք նույնպես տեղի էին ունենում մարտական գործողություններին զուգահեռ:

Ռուսաստանի կողմից ընդհատված Ստամբուլի բանակցությունների վերսկսման վրա շեշտադրումն առավել հարմար է իր հաղթանակը միջազգայնորոն լեգիտիմացնելու համար: 2022 թվականի բանակցությունները ուկրաինական զիջումների մասին էին ռուսական զորքերի հարձակման դադարեցման դիմաց, այլ կերպ ասած՝ Ռուսաստանի հաղթանակի պայմանների մասին: Այն ժամանակ ո՛չ Ուկրաինան, ո՛չ էլ Արևմուտքը պատրաստ չէին օրինականացնել Ռուսաստանի նվաճումները, հիմա նրանք ավելի պատրաստակամ են քանի որ Թրամփը ուղղակիորեն Ուկրաինային դրդում է զիջումների գնալ [**9**]:

2025 թ. մայիս-հունիս ամիսների ԱՄՆ միջնորդությամբ հակամարտության կարգավորման արդյունքը հունիսի 2-ին Ստամբուլի նոր հանդիպումն էր, որտեղ կողմերն ունեին հետևյալ դիրքորոշումները: Նախ Թրամփը ձգտում էր հասնել Պուտինի և Զելենսկու անձնական մասնակցությանը, սակայն Զելենսկին եկավ, իսկ Պուտինը՝ ոչ: Ռուսական կողմը պահանջում էր նոր տարածքների միացման միջազգային ճանաչում, Ուկրաինայի չեզոքություն, նրա զինված ուժերի կրճատում, ռուսաց լեզվի պաշտոնական կարգավիճակի ամրագրում, Ռուսաստանի դեմ Արևմուտքի պատժամիջոցների վերացում և պատերազմական վնասի փոխհատուցման պահանջներից հրաժարում [**10**]: Ուկրաինան պահանջում էր Միջազգային անվտանգության երաշխիքներ, ՆԱՏՕ-ին անդամակցելու իր իրավունքի ճանաչում, բոլոր բռնակցված տարածքների վերադարձ և այլն [**11**]:

Ըստ էության, կողմերը փոխանակվում են «մաքսիմալիստական պահանջներով» [**12**]: Ռուսաստանի կողմից ներկայացված էր երկու փաստաթուղթ: Առաջին փաստաթուղթը վերաբերում էր երկարատև խաղաղության պայմաններին, մյուսը՝ հրադադարի պայմաններին: Ռուսական կողմի մաքսիմալիստական պահանջները ներառված էին **«Վերջնական կարգավորման հիմնական պարամետրեր»** վերնագրով խաղաղության հուշագրում [**12**]: Ստամբուլի հունիսյան բանակցություններում համաձայնություն կայացվեց միայն գերիների և զոհվածների մարմինների փոխանակման հարցով: Առաջընթացը միայն այն էր, որ Ուկրաինան և Ռուսաստանը երեք տարվա ընթացքում առաջին անգամ նստեցին ուղիղ բանակցությունների:

Հետազոտական կենտրոններում գերակշռում է այն կարծիքը, որ ռուս-ուկրաինական բանակցությունների ստամբուլյան երկրորդ փուլը հաստատեց այն ակնհայտ իրողությունը, որ Պուտինը հետաքրքրված է ոչ թե հրադադարով, այլ վերջնական հաղթական պայմանագրով: Հենվելով թվային գերազանցության վրա և անտեսելով կորուստները՝ Ռուսաստանի առաջնորդը գնալով ավելի վստահ է դառնում, որ կարող է ստիպել Ուկրաինային կապիտուլյացիայի ենթարկվել: Կրեմլը հասկանում է, որ Թրամփի վարչակազմը մտադիր չէ Կոնգրեսից խնդրել Ուկրաինայի համար նոր օգնության փաթեթ: Եվ նոր պատժամիջոցների սպառնալիքը գնալով ավելի շատ է ընկալվում որպես դատարկ խոսքեր, քանի որ Վաշինգտոնն այժմ չի շտապում արձագանքել նույնիսկ գործող սահմանափակումների շրջանցմանը: Ի վերջո, Ռուսաստանը 2014 թվականից ապրում է պատժամիջոցների ներքո և Պուտինը սահմանափակումների յուրաքանչյուր նոր փուլ ընդունում է վստահությամբ համոզված լինելով որ տնտեսությունը կարող է հաղթահարել դրանք [**13**]: Սրանով էր պայմանավորված այն, որ գինադադարի մասին Թրամփի վերջնագրին ի պատասխան Պուտինը չդադարեցրեց Ուկրաինայի դեմ ռազմական գործողությունները:

Թրամփ-Պուտին հանդիպումը Ալյասկայում

Հրադադարի շուրջ բանակցությունների ձախողումը չհիասթափեցրեց Թրամփին: Նա Կրեմլ ուղարկեց հատուկ դեսպանորդ Սթիվ Ուիտկոֆֆին, և հստակեցրեց, որ երկկողմ հանդիպման մասին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինից առաջարկը հետաքրքրում է իրեն և նշանակեց հանդիպման ամսաթիվը և վայրը: **Ալյասկայի ընտրությունը** խորհրդանշական էր ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Ռուսաստանի համար: Ռուսաստանի և Միացյալ Նահանգների միջև աշխարհագրական և պատմական կամուրջ հանդիսացող տարածքում, Ալյասկայում՝ գագաթնաժողով անցկացնելու գաղափարն ինքնին բավականին հեղափոխական էր: Երկու առաջնորդներն էլ կենտրոնացած էին իրենց փառահեղ անցյալի վրա: Ռուսաստանի համար Ալյասկան խորհրդանշում է ռուսական մայրցամաքային կայսրության ընդլայնման գագաթնակետը: Միացյալ Նահանգների համար, այն նույնպես խորհրդանշում է ընդլայնման ոսկեդարը: Թրամփն Ալյասկան ընկալում էր լավ գործարքի օրինակ, բայց նաև Ռուսաստանի զիջման օրինակ: Սա կարող էր նաև դիտարկվել որոշակի թաքնահարույց ուղերձ Կանադային և Դանիային:

Երկու նախագահների առաջնորդությամբ ***ռուս-ամերիկյան բարձրագույն մակարդակով հանդիպումը տեղի ունեցավ 2025 թ. օգոստոսի 15-ին, Ալյասկայի Անքորիջ նահանգի ռազմակայանում:*** Գագաթնաժողովում հանդիպումը տևեց երեք ժամ և ավարտվեց առանց կոնկրետ համաձայնագրի կնքման: Այնուամենայնիվ այն դարձավ հակամարտության կարգավորման շուրջ ռուս-ամերիկյան դիվանագիտական համագործակցության բարձրակետը: Ալյասկայի գագաթնաժողովի ընդհանուր արդյունքը կարելի է ամփոփել մեկ տողով: Եթե Թրամփը համոզեր Պուտինին համաձայնվել հրադադարի, հանդիպումը կլիներ նրա հաջողությունը. ցանկացած այլ արդյունք նշանավորում է Պուտինի հաղթանակը: Փաստացիորեն ստացվեց երկրորդը, հրադադրի մասին համաձայնություն չկայացավ:

Ալյասկայում ռուս-ամերիկյան բանակցությունների բովանդակությունը գործնականում անհայտ է մնում: Որոշ փակագծեր բացել է «Ռոյթերս» գործակալությունը: Նրա հաղորդմամբ նախագահներ Դոնալդ Թրամփը և Վլադիմիր Պուտինը քննարկել են Ուկրաինայի հարցում հնարավոր փոխզիջումը: Ռուսաստանը հրաժարվել է որոշ տարածքային պահանջներից և առաջարկել է Ուկրաինային վերադարձնել Սումիի, Խարկովի և Դնեպրոպետրովսկի շրջանների մի մասը: Ուկրաինայի կողմից ՆԱՏՕ-ի անդամակցությունից հրաժարվելու, ուկրաինական բանակի թվաքանակի սահմանափակման, արևմտյան զորքերի տեղակայման արգելքի, ապառազմականացման և դենացիֆիկացման, ոչ միջուկային կարգավիճակի, Ռուսաստանի կողմից գրավված բոլոր տարածքների միջազգային ճանաչման, հակառուսական պատժամիջոցների վերացման վերաբերյալ պահանջները պահպանվել են: Գործակալությունը նախկինում նշել էր Ալյասկայում առաջադրված մի քանի այլ պայմաններ՝ պատժամիջոցների մասնակի վերացում, Ուկրաինայի կողմից Արևմուտքից անվտանգության երաշխիքներ ստանալու հնարավորություն (առանց ՆԱՏՕ-ի մասնակցության), ռուսաց լեզվի պաշտոնական կարգավիճակ և երկրում Ռուս ուղղափառ եկեղեցու գործունեության ազատություն [**14**]:

Ալյասկայի գագաթնաժողովի ուղերձներից էր, որ Թրամփը համաձայնվեց, որ անհրաժեշտ է ոչ թե հրադադար, որը կարող է անկայուն լինել, այլ ուղիղ քայլ դեպի խաղաղության պայմանագիր: Խաղաղության մեջ Ռուսաստանը ներառում է և՛ «հիմնական պատճառները», և՛ «հավասար և անբաժանելի անվտանգությունը», ինչը, Ռուսաստանի մեկնաբանությամբ, նշանակում է իրավունք՝ արգելելու այլ երկրներին անել այն, ինչը Ռուսաստանը համարում է իր համար վտանգավոր: Ընդունելով այս իրողությունը, Թրամփը եվրոպացիների և Ուկրաինայի հետ համաձայնեցված դիրքորոշումից անցավ դեպի Ռուսաստանի դիրքորոշմանը [**15**]: Ըստ Ռոյթերսի աղբյուրների Ալյասկայի գագաթնաժողովը հակամարտության սկզբից ի վեր խաղաղ կարգավորման լավագույն հնարավորությունն էր, որտեղ Ռուսաստանի պայմանների վերաբերյալ կոնկրետ քննարկումներ էին տեղի ունենում: «*Պուտինը պատրաստ է խաղաղության և փոխզիջման: Այս ուղերձը փոխանցվել է Թրամփին*», - ասել է գործակալության աղբյուրներից մեկը:

Ալյասկայում կայացած գագաթնաժողովը և դրան հաջորդած ԱՄՆ նախագահ Վլադիմիր Զելենսկու և եվրոպացի առաջնորդների միջև Վաշինգտոնում կայացած հանդիպումը Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի արագ ավարտի նոր հույսերի ալիք առաջացրին: Մի քանի տարվա ընթացքում առաջին անգամ կողմերը սկսեցին քննարկել կարգավորման գործնական քայլերը: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ իրականում բանակցությունների երկարաժամկետ հեռանկարներում քիչ բան է փոխվել: Մինչ մասնակիցները կարող էին արդարացիորեն նշել որոշակի մարտավարական հաջողություններ, ռազմավարական առումով կորուստները ավելի հավանական են: Ռազմական գործողությունները շարունակվեցին, իսկ Սթարմեր-Մակրոն-Մերց եռյակը շարունակում է աջակցել Զելենսկու դիրքորոշումը տարածքային հարցերում: Կարելի է համաձայնվել ուղեղային կենտրոններում առկա այն տեսակետի հետ, որ Ալյասկայում անսպասելի գագաթնաժողովը ցույց տվեց նաև, որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Միացյալ Նահանգները պատրաստ չեն նոր, ավելի բարձր աստիճանի դիմակայության: Թրամփը խոստովանեց, որ չի հավատում, որ պատժամիջոցները կստիպեն Մոսկվային դադարեցնել պատերազմը: Իր հերթին, Պուտինը փորձեց պահպանել կապը Թրամփի հետ, որը միակ արևմտյան առաջնորդն էր, որի հետ հնարավոր էր երկխոսությունը: Գործարքը չեղավ, բայց Պուտինը կարողացավ բանակցություններում զգալի տեղաշարժի հասնել դեպի պատերազմը դադարեցնելու Ռուսաստանի տեսլականը: Սա դրսևորվեց երկու կարևոր հանգամանքների մեջ: Նախ, Թրամփը վերջապես համոզվեց, որ Ռուսաստանը, որպես միջուկային տերություն, չի կարող պարտվել մարտադաշտում, ինչը նշանակում է, որ Արևմուտք-ՌԴ բախումը Ուկրաինայի համար, ռազմական լուծում չունի: Երկրորդ, ԱՄՆ ղեկավարությունը հրաժարվեց հրադադարի պահանջից և ընդունեց Պուտինի հիմնական փաստարկը, որ կողմերը պետք է անհապաղ քննարկեն երկարաժամկետ խաղաղությունը [**16**]: Ալյասկայից հետո Մոսկվան և Վաշինգտոնը ընդունում են, որ առճակատումը շահավետ չէ երկու կողմերի համար էլ: Սա ձևավորում է հետագա փոխհարաբերությունների շրջանակը, որտեղ ուկրաինական կարգավորման տարաձայնությունները մնում են, բայց գերակայում է ԱՄՆ-ՌԴ կոնֆլիկտը կանխելու երկկողմանի վճռականությունը: Միաժամանակ եվրոպացիների հույսերը այն մասին, որ Թրամփը կհիասթափվի Պուտինից, չիրականացան [**17**]:

Ճգնաժամի կարգավորման ընթացքը Ալյասկայից հետո

2025 թ. սեպտեմբերին համաշխարհային հանրությունը սպասում էր գործնական առաջընթացի: Վաշինգտոնից ճգտում էին Ալյասկայի երկկողմ գագաթնաժողովից հետո հասնել Թրամփ-Պուտին-Զելենսկի եռակողմ հանդիպման, որն ավելի կամրապնդեր թրամփյան խաղաղարար առաքելության համբավը: Այս ճգտմանը ի հակառակ Կրեմլը հստակորեն ակնարկում էր, որ չի ստորագրի վերջնական խաղաղության համաձայնագիր Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հետ՝ պնդելով, որ նա այլևս լեգիտիմ չէ: Սա նշանակում էր, որ Կրեմլը հստակեցնում է, որ Ուկրաինայում ընտրությունները պետք է անցկացվեն հնարավորինս շուտ: Ռուսաստանի իշխանությունները հույս ունեն, որ նման քվեարկությունը կհրահրի քաղաքական և սոցիալական ճգնաժամ հարևան պետությունում: Ուկրաինայի և Ռուսաստանի նախագահների հանդիպման կազմակերպումը դարձավ Միացյալ Նահանգների մասնակցությամբ խաղաղության բանակցությունների հիմնական վիճահարույց թեման: Դոնալդ Թրամփը պնդում էր նման գագաթնաժողովի անցկացման վրա: Վլադիմիր Զելենսկին նույնպես կողմ էր հանդիպմանը: Սակայն Կրեմլն անում է ամեն ինչ՝ ուղիղ պատասխաններից խուսափելու համար: Պուտինը չի կարող անմիջապես մերժել Թրամփին, բայց նա ակտիվորեն հետաձգում է Զելենսկու հետ հանդիպումը՝ սահմանելով լրացուցիչ պայմաններ [**18**]: Միաժամանակ Զելենսկին ճգտում է հաշտությանը հասնել ընտրություններից առաջ, որովհետև առանց դրա նրա քաղաքական վախճանը անխուսափելի կլինի:

2025 թ. բանակցային գործընթացի բեկումնային պահը հակամարտության կարգավորման 28 կետից բաղկացած խաղաղության ամերիկյան նախագիծն էր: Այն ներկայացվեց նոյեմբերի 20-ին, երբ Զելենսկին հանդիպեց Դեն Դրիսկոլի գլխավորած ԱՄՆ բարձրաստիճան զինվորական պաշտոնյաների պատվիրակության հետ: Հանդիպման ժամանակ Վաշինգտոնը պաշտոնապես ներկայացրեց իր խաղաղության ծրագիրը Ուկրաինայի նախագահին [**19**]: Հակիրճ Թրամփի ծրագիրն ուներ հետևյալ բովանդակությունը. Ղրիմը, Լուգանսկը և Դոնեցկը կճանաչվեն որպես դե ֆակտո ռուսական, այդ թվում՝ Միացյալ Նահանգների կողմից; Խերսոնի և Զապորոժեի մարզերը կբաժանվեն ներկայիս ռազմաճակատի երկայնքով: Ուկրաինայի զինված ուժերի թիվը կսահմանափակվի 600,000-ով; Ուկրաինան իր Սահմանադրությամբ կամրագրի, որ չի միանա ՆԱՏՕ-ին, իսկ ՆԱՏՕ-ն կպարտավորվի ապագայում չընդունել Ուկրաինային դաշինքի կազմում: Ուկրաինան իրավունք կունենա միանալ Եվրամիությանը; ՆԱՏՕ-ն զորքեր չի տեղակայի Ուկրաինայի տարածքում; Ռուսաստանը խոստանում է չհարձակվել Եվրոպայի և Ուկրաինայի վրա, և ՆԱՏՕ-ն չի ընդլայնվի; 100 միլիարդ դոլար սառեցված ռուսական ակտիվներ կներդրվեն Ուկրաինայի վերակառուցման մեջ, որի շահույթի 50%-ը կստանա Միացյալ Նահանգները: Եվրոպան կավելացնի ևս 100 միլիարդ դոլար: Սառեցված ռուսական ակտիվների մնացած մասը կներդրվի ԱՄՆ-Ռուսաստան ներդրումային հիմնադրամում և կօգտագործվի համատեղ նախագծերի համար; Ռուսաստանի դեմ պատժամիջոցները աստիճանաբար կվերացվեն, և այն կհրավիրվի վերադառնալու Մեծ ութնյակ; Համաձայնագրի ստորագրումից 100 օր անց Ուկրաինայում կանցկացվեն ընտրություններ; Այս հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը կստանան լիակատար համաներում, պատերազմի ընթացքում իրենց գործողությունների համար; Երբ բոլոր կողմերը համաձայնվեն այս փաստաթղթի հետ, հրադադարը ուժի մեջ կմտնի անմիջապես:

Թրամփի խաղաղության ծրագիրը ներառում էր Ուկրաինայի անվտանգության երաշխիքներ՝ ՆԱՏՕ-ի կանոնադրության 5-րդ հոդվածի մոդելով, որը սահմանում է, որ մեկ անդամ պետության վրա հարձակումը համարվում է բոլորի վրա հարձակում: Երաշխիքները պարտավորեցնում են ԱՄՆ-ին և նրա եվրոպացի դաշնակիցներին Ուկրաինայի վրա հարձակումը դիտարկել որպես ամբողջ «տրանսատլանտյան համայնքի» վրա հարձակում: Այն նշում է, որ Ռուսաստանի կողմից Ուկրաինայի վրա ցանկացած «նշանակալի, դիտավորյալ և տևական զինված հարձակում» «պետք է համարվի հարձակում, որը սպառնում է տրանսատլանտյան համայնքի խաղաղությանը և անվտանգությանը», և ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները համապատասխանաբար կարձագանքեն, այդ թվում՝ ռազմական ուժով: Անվտանգության երաշխիքները ուժի մեջ կլինեն 10 տարի և կարող են երկարաձգվել փոխադարձ համաձայնությամբ: ԱՄՆ պաշտոնյայի խոսքով՝ Թրամփի վարչակազմը առաջարկվող անվտանգության երաշխիքները համարում է Զելենսկու և Ուկրաինայի երկարաժամկետ անվտանգության «մեծ հաղթանակ» [**20**]:

Իր բովանդակությամբ այս նախագիծը իսկապես բեկումնային էր և փոխզիջումային: Մեր դիտարկմամբ այն կարող էր դառնալ պատերազմի ավարտի և հակամարտության երկարաժամկետ սառեցման փաստաթուղթը: Վերլուծական հետազոտական կենտրոններում միասնական կարծիք չկար: Դժվար է ասել նաև, թե այս նախագծը արդյոք քննարկվել և համաձայնեցվել էր Ալյասկայի հանդիպման ժամանակ: ԱՄՆ նոր խաղաղության ծրագրի վերաբերյալ ազգին ուղղված տեսաուղերձում Վլադիմիր Զելենսկին հայտարարեց, որ սա Ուկրաինայի պատմության ամենադժվար ժամանակներից մեկն է, բայց խոստացավ չգնալ զիջումների, որոնք կնվաստացնեն երկիրը: Արևմտյան լրատվամիջոցները հաղորդեցին, որ ԱՄՆ-ն սպառնացել է Ուկրաինային զրկել հետախուզական տվյալներից և զենքից, իսկ Թրամփը հայտարարեց, որ խաղաղության համաձայնագիրը կարող է կնքվել արդեն նոյեմբերի 27-ին: Միևնույն ժամանակ, Վլադիմիր Պուտինը հաստատեց, որ Մոսկվան ստացել է ծրագիրը, և որ այն «կարող է հիմք հանդիսանալ» խաղաղության համար [**21**]:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին որ Զելենսկու վարչակարգը չէր պատրաստվում ընդունել այս պլանը: Այս դիրքորոշմանը նպաստում էին ԵՄ առաջատար լիդերներ Մակրոնը, Մերցը և Սթարմերը, որոնք շարունակում են պնդել 1991 թ. սահմաններով Ուկրաինայի տարածքային ամբողջականության վերականգնման պահանջը: Կիևում վերանայեցին 28 կետերը: Կրճատումներիից և խմբագրումից հետո ներկայացվեց 20 կետերից բաղկացած նոր նախագիծը: Շուտով Զելենսկին ներկայացրեց Կիևի, Մոսկվայի և Վաշինգտոնի կողմից քննարկվող խաղաղության ծրագրի բոլոր 20 կետերը: Դեկտեմբերի 24-ին ուկրաինացի լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ուկրաինայի նախագահը ծրագիրը որակեց որպես «պատերազմը դադարեցնելու հիմնական փաստաթուղթ» և մեկնաբանեց դրա հիմնական կետերը: Ծրագրի չլուծված հարցերի թվում նշելով Զապորոժիեի ատոմակայանի և տարածքային կարգավիճակի հարցերը [**22**]:

2025 թ. ուկրաինական ճգնաժամի շարժընթացը և ԱՄՆ-ՌԴ բանակցային գործընթացը վերջնական դրական արդյունք չտվեց: 2026 թ. սկիզբը նշանավորվեց պատերազմական գործողությունների շարունակմամբ: ԵՄ քաղաքական էլիտաները չնդունեցին Թրամփի խաղաղության պլանի 28 կետերը: 2025 թ. վերջին ակորդը Մայամիում Ուիտկոֆի առանձին հանդիպումներն էին ռուսական և ուկրաինական պատվիրակությունների հետ: Դրանից հետո Կրեմլը պնդում է, որ Թրամփի ծրագրի ուկրաինական և եվրոպական փոփոխությունները խոչընդոտում են խաղաղությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. МИД России опубликовал проекты договоров с НАТО и США по безопасности https://www.vedomosti.ru/politics/news/2021/12/17/901297-mid-rossii-opublikoval-proekti-dogovorov
2. **Гапоненко А.,** Российско-украинский конфликт: интересы участников, внутренние ограничения, внешняя среда и сценарии разрешения, 09.01.2025 https://goo.su/Q7aZ (հղումը կարճեցված է, մուտք 17.01. 2026)
3. **Alexander Baunov,** Killing with Kindness: Why Putin Is Proving So Amenable to Trump, https://goo.su/gCaUUO (հղումը կարճեցված է, մուտք 07.12. 2025)
4. РФ и США договорились восстановить штат посольств в Москве и Вашингтоне — Рубио https://www.ng.ru/news/810974.html (մուտք 06.12. 2025)
5. Ссора года. Какие последствия конфликта Зеленского и Трампа и спасет ли ситуацию Европа https://odessamedia.net/news/ssora-goda-kakie-posledstviya-konflikta-zelenskogo-i-trampa-i-spaset-li-situatsiyu-evropa (մուտք 06.12. 2025.)
6. Treasury Announces Agreement to Establish United States-Ukraine Reconstruction Investment Fund https://home.treasury.gov/news/press-releases/sb0126 (մուտք 06.12. 2025թ)
7. **Кира Красовская**, В Париже прошли переговоры США, Европы и Украины https://www.dw.com/ru/v-parize-prosli-peregovory-ssa-evropy-i-ukrainy/a-72279339 (մուտք 18.12. 2025)
8. **Геннадий Свидригайлов,** США требуют 30-дневного прекращения огня на Украине. Трамп угрожает новыми санкциями, https://www.gazeta.ru/politics/2025/05/09/21007112.shtml?utm_auth=false (մուտք 15.12. 2025)
9. If Trump abandons Ukraine, can Europe help Kyiv fight on? The clock is ticking to answer that https://apnews.com/article/ukraine-europe-trump-defense-putin-zelenskyy-862fe7f477d372024d22cb74508adf6f (մուտք 15.12. 2025)
10. Опубликован полный текст меморандума России «по урегулированию украинского кризиса», https://meduza.io/feature/2025/06/02/opublikovan-polnyy-tekst-memorandum-rossii-po-uregulirovaniyu-ukrainskogo-krizisa (մուտք 11.12. 2025)
11. Reuters опубликовал текст украинского меморандума о прекращении огня, https://www.rbc.ru/politics/01/06/2025/683c6a149a794732b1af799e (մուտք 11.12. 2025)
12. **Александр Баунов,** Дипломатический театр. Кому пытаются угодить российские переговорщики, https://storage.googleapis.com/crng/russia-trump-peace-talk-confusion.html?utm_source=carnegiewebsite&utm_medium=website (մուտք 11.12. 2025)
13. **Nate Reynolds and Eugene Rumer**, Europe Must Lead to Prevent the Worst in Ukraine**,** https://goo.su/DILta2 (հղումը կարճեցված է, մուտք 26.12. 2025)
14. Reuters объяснил, на какой компромисс готова Россия в сделке с Украиной, https://www.rbc.ru/politics/21/08/2025/68a73c8b9a79471e0adf1d4d?from=story_689b28779a79477e348293d6 (մուտք 26.12. 2025)
15. **Alexander Baunov,** Alaska Summit Leaves Ukraine a Hostage to Russia's Demands of the West, https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2025/08/alaska-summit-putin-trump?lang=en (մուտք 03.01. 2026)
16. **Tatiana Stanovaya,** Tactical Victories in Ukraine Peace Talks Will Only Lead to Strategic Defeat, https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2025/08/russia-usa-ukraine-alaska-goals?lang=en**,** (մուտք 03.01. 2026)
17. **Jonathan Martin,** How to Avoid the Putin Slow-Walk: A New Trump Ultimatum, https://goo.su/tHPqem3 (հղումը կարճեցված է, մուտք 03.01. 2026)
18. **Andrey Pertsev** Why Is the Kremlin Insisting on Ukraine Holding Elections?, https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2025/09/russia-ukraine-zelensky-replacement?lang=en (մուտք 13.01. 2026)
19. Опубликован мирный план Трампа для Украины – читайте полный текст США обещают Украине гарантии безопасности, но не членство в НАТО, https://yle.fi/a/74-20195384 (մուտք 13.01. 2026)
20. https://www.axios.com/2025/11/20/trump-ukraine-peace-plan-28-points-russia
21. https://www.bbc.com/russian/articles/c9w7j8qxpvxo
22. **Андрей Злобин**, Зеленский впервые назвал 20 пунктов обсуждаемого с США мирного плана по Украине, https://www.forbes.ru/society/552745-zelenskij-vpervye-nazval-20-punktov-obsuzdaemogo-s-ssa-mirnogo-plana-po-ukraine (մուտք 13.01. 2026)

Сдана / Հանձնվել է՝ 05.10.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 12.10.2026
Принята / Ընդունվել է՝ 19.10.2026